

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԻՐԱԻՈՒՆՔԸ

ԸՍՏ ԲՈՒՍԱՑ ՕՐԷՆՍԴՐՈՒԹԵԱՆ

ՄԻՔ. ԱԹԱԲԷԳԵԱՆԵՒ

(Շարունակութիւն և վերջ¹)

Գրական օրէնսդրութեան պետակէտից հեղինակի իրաւունքի պէր ճանաչուով են ամենից առաջ, բնականաբար, իրենք՝ հեղինակները, իսկ չեւորջ նրանց իրաւաբանական փոխանորդները—ժառանգները, հրատարակիչները: Հետեւաբար պէր կարող է լինել մի անձնաւորութիւն, որ ամենեւին չէ մասնակցել երկասիրութեան արեղծագործութեան մէջ:

Սակայն պէտք է նկատել, որ իրաւունքը սկզբնական է միայն (первоначальное право) ի Դէմն հեղինակի, այն ինչ ուրիշներին անցնելիս այդ միեւնոյն իրաւունքը շառնում է անցողական (производное право). բայց այդ մասին չեւորջ: Համարեա բոլոր օրէնսդրութիւնները պահպանում են հեղինակների շահերը կամ նրանց սկզբնական իրաւունքը մինչև նրանց կեանքի վերջը, իսկ մեռնելու Դէպքի համար զանազան պետութիւնների մէջ այլ և այլ ժամանակամիջոցներ են սահմանում հեղինակների իրաւաբանական յաջորդների պաշտպանութեան համար:

Ռուսական օրէնսդրութիւնը հեղինակի շահերը պահպանում է նրա ամբողջ կեանքի ընթացքում, իսկ մեռնելուց չեւորջ նրա յաջորդներին պաշտպանում է մինչև 50 փարի²: Օրէնսդրու-

¹ Տես Մուրճ 1900 թ. № 4.

² Օրինագրքի հատոր X, մաս I, լուծած 1185.

Թիւնք հեղինակի շահերի պաշտպանութեան հարցում խորութիւն չի դնում ուսու և օտար քաղաքացիների մէջ. նա միակերպ հովանաւորում է օտարահայտակների երկերը, ի հարկէ, այն շէպքում, երբ այդ երկերը սուլած են Ռուսիայում: Բացի այս՝ ուսուական օրէնքը՝ ինչպէս երկասիրողներին, նոյնպէս և թարգմանիչներին ընդունում է որպէս ինքնուրոյն և համահաւասար տէրեր հեղինակի իրաւունքի: Բոլոր այն յօդածներում, որոնց մէջ խօսուում է երկասիրողների իրաւունքների մասին, նրանց հետ միասին չիչուում են և թարգմանիչները: Ամեն մի հեղինակ կամ թարգմանիչ իրաւունք ունի օգտուելու իւր գրքի հրատարակութիւնից իւր ամբողջ կեանքի ընթացքում... և այլն: 3-դ յօդածը. «գրքի երկրորդ հրատարակութեան համար հարկաւոր է նախ կայացնել համաձայնութիւն հեղինակի, թարգմանիչի միջև: 6-դ յօդած. «Այն մարդիկ, որոնց հեղինակը կամ թարգմանիչը կրակել է կամ մի ուրիշ կերպ չանձնել է իր բոլոր կամ մի քանի գրածները, սկստք է...» և այլն:

Հարեաւար ուսուական օրէնքով թարգմանիչն ևս, ինչպէս հեղինակը, պաշտպանութեան ենթակայ է մինչև իւր կեանքի վերջը, իսկ մեռնելուց չկորոյ նրա ժառանգների շահերը պահպանուում են մինչև 50 տարի:

Մինչև այժմ՝ երբ խօսուում էինք հեղինակ-երկասիրողների իրաւունքների պաշտպանութեան մասին, մենք հեղինակի իրաւունքի տէր ենթադրում էինք միայն մի անձն, մի անհատ. սակայն գրական կեանքը առաջ բերաւ և այնպիսի օրինակներ, երբ մի հեղինակութեան ստեղծագործողները լինում են երկու և ավելի անհատներ. այսպիսի օրինակները հետեանք են այսպէս կոչւած հեղինակցութեան (соавторство) և աշխատակցութեան:

Արեւմտեան Նւրոպայի օրէնսդրութիւնը ուշադրութիւն դարձրեց այսպիսի հաղինակցութեան շէպքերի վրայ. օրինակ 1870 թւի զերմանական օրէնքը հեղինակցութեան վերաբերեալ շէպքերը այսպէս է որոշում. «մի քանի անհատների, որպէս հեղինակիցների ստեղծած երկերի պաշտպանութեան ժամանակամիջոցը տւում է մինչև 30 տարի այդ հեղինակիցներից վերջինի մահից չկորոյ: Ռուս օրէնսդրութեան մէջ ոչ մի ցուցում չկայ հեղինակցութեան հարցի վերաբերմամբ, թէև ուսուական գրականութիւնն

այդպիսի օրինակներ արտադրել չանձին, օրինակ, Օստրովսկու և Սալաեւովի (Женитьба Блугина, Дикарка) և ուրիշների:

Վերև չիշեցինք նաև աշխարակցութեան մասին. սա մի քիչ փարբերուում է հեղինակցութիւնից:

Հեղինակցութիւնը ենթադրուում է երկու, և, երբեմն, աւելի մարդկանց մասնակցութիւն, որոնք հաւասար իրաւունք ունին այն երկի նկարմամբ, որ հանդէս է գալիս իբրև հետևանք նրանց միաբան գործակցութեան և մի ամբողջացրած աշխարհանքի սպաւորութիւն է թողնում: Աշխարակցութեան Դէպքերում՝ «երկերի վրայ կարելի է նայել երկու կողմից. ամբողջ աշխարհասիրութեան հեղինակի և առանձին յօդաւածների հեղինակների փեսակէտից»¹:

Այդպիսի միաւորութեան օրինակ կարող է ծառայել ասենք հէնց Բրոկհաուզի և Եւֆրոնի «Հանրագիտական բառարանը». ամբողջովին վերցրած այդ բառարանը կամ նրա նման մի աշխարհութիւն կարող է հրատարակել կամ ձեռնարկողը կամ այն անձը, որին սա զիջանում է իր իրաւունքը. այն ինչ զանազան յօդաւածների հեղինակները իրենց են վերապահում նաև բառարանում սպաժ առանձին յօդաւածները հրատարակելու իրաւունքը: Եւրոպական շար օրէնսդրութիւններ այդ փեսակէտից էլ նայում են խումբագրի և առանձին յօդաւածների հեղինակների յարաբերութիւնների վրայ: Այս հարցում բացառութիւն չէ կազմում և ուսսական օրէնսդրութիւնը. մի ամբողջ աշխարհութեան խմբագիրների և հրատարակիչների մասին 420-րդ յօդաւածի յաւելածի 7րդ յօդաւածը ասում է՝ «Հրատարակիչները՝ ամսագիրների և ուրիշ պարբերական գրաւածների նոյնպէս և այլմանախնների և առհասարակ այնպիսի գրքերի, որոնք կազմուած են զանազան փոքրիկ հեղինակութիւններից կամ յօդաւածներից, ունին բացառիկ իրաւունք արտատպելու այդպիսիները նոյն ձևով, ընդհանուր կանոնով»:

Սրա հետ միասին ուսսական օրէնսդրութիւնը ի նկատի ունինաւ և օրինակի համար՝ որ և է համաչնագիտական բառարանում կամ ամսագրում զիւրեւաժ առանձին յօդաւածների հեղինակների շահերը:

¹ Եւրէնսի. Հեղինակի իրաւունքը, էջ 138

Առանձին յօդաձևների հեղինակների այդպիսի շահերի պաշտպանութիւնը ուսուսական օրէնքն այսպէս է ձեւակերպում. Հեղինակը կամ թարգմանիչը տեղաւորելով իրանց հեղինակութիւնը կամ թարգմանութիւնը մի ամսագրում կամ մի ժողովածուի մէջ, չեն զրկում այդպիսիները առանձին տպելու իրաւունքից, եթէ նոցա չի արգելում իրանց պայմանը նոյն հրատարակչի հետ¹:

Այս կէտից երևում է, որ առանձին յօդաձևների հեղինակները՝ եթէ մի ամբողջ աշխատութեան հրատարակչներին կամ խմբագիրներին հետ նախնական համաձայնութիւն չեն կապարել, իրաւունք ունին իրենց յօդաձևները հրատարակել նաև այլ ճանապարհով՝ ինչի այդ մասնաւոր տեսակների ձևով, թէ ուրիշ ամսագիրներում զետեղելով, և այլն: Ինչ վերաբերում է այնպիսի աշխատութիւններին, որոնց մասնակից հանդիսանում են միաժամանակ և՛ հրատարակիչը և՛ խմբագիրը և՛ աշխատակիցները, ինչպէս որ պարբերական հրատարակութիւնները, — աշխատակիցների գրութիւնը այստեղ էլ ոչ մի բանով չէ զանազանում վերոյիշեալ առանձին յօդաձևների հեղինակների՝ գրութիւնից, բայց եթէ նրանով, որ այստեղ հաշիւ չեն առնում լրահաւաքներն և մանր նկատողութիւնների կազմողները: Հեղինակի իրաւունքը մի լրագրի վրայ՝ իբրև մի ամբողջութեան՝ պարկանում է խմբագրին կամ փոխադարձ համաձայնութեան հիման վրայ՝ հրատարակչին, որը դրա փոխարէն որոշ վարձատրութիւն է տալիս առաջինին:

Այժմ անցնելով անսնուն կամ կեղծանուն գրածքների հեղինակներին՝ այսքան միայն կը նկատենք, որ օտար օրէնսդրութիւնների որոշումներին նայելով՝ այդպիսի գրածքների վրայ հեղինակի իրաւունքը ձեռք է բերում հրատարակիչը, ամենչև որ հեղինակինքը կամ նրա ժառանգները կապացուցանեն թէ ով է գրական երկի իսկական ստեղծագործողը: Իսկ Ռուսական օրէնսդրութիւնը նոյն խնդրի նկատմամբ ոչ մի շեկովարող որոշում չունի, նոյն իսկ Դէպք չէ եղել որ այդպիսի խնդիրներ շարաւարութեան և մասնաւոր վճռաջինջ արեւնի քննութեան առարկայ եղած լինին: Ռուսական օրէնսդրութիւնը հեղինակի իրաւունքի տէրերի թւում

¹ X հ. I մ. 420 յօդ. (2 ծանօթ.) լաւելածի 8 յօդ.:

շատում է և բերանացի աւանդութեամբ պահուած ժողովրդական երգերի, առաջինների, հէքիաթների և պարմաւաճքների առաջին հրատարակիչներին,¹ նոյնպէս և հին ձեռագիրների հրատարակիչներին և այլն: Ուստի օրէնքը՝ վերջիններիս ծանաչելով հանդերձ օրպէս փէրեր հեղինակի իրաւունքի իրենց հրատարակութիւնների նկատմամբ, ուրիշներին չէ արգիլում հրատարակել միեւնոյն փարեզրութիւնները կամ սրեւէ հին ձեռագիր՝ վերցնելով աւելի ամբողջացրած կամ ընդհանրապէս այլ օրինակներից:

Անկախ Ֆիզիկապէս դոյութիւն ունեցող անձերի վերոյիշեալ իրաւունքներից, ուստի օրէնսդրութիւնը բովանդակում է մի քանի որոշումներ հեղինակի իրաւունքի փէր ներկայացող իրաւաբանական անձնաւորութիւնների պաշտպանութեան հարցի վերաբերմամբ: Իրաւաբանական անձնաւորութիւնները մեզանում աւելի քիչ ժամանակամիջոց են վաչելում օրէնքի հովանաւորութիւնը, քան հեղինակի յաջորդները՝ ժառանգներն ու հրատարակիչները: Յայտնի է՝ որ վերջիններիս վերաբերմամբ հեղինակի իրաւունքը ոչ թ ունի մինչև 50 փարի հեղինակի մահից չեփոց, այնինչ իրաւաբանական անձնաւորութիւնները կարող են հեղինակի իրաւունքի փէր համարել մինչև 50 փարի՝ սկսելով միայն հեղինակութեան առաջին հրատարակութեան օրից: Պրոֆէսոր Շերշենեիչը այս դրութիւնը համարում է անհետողականութեան արդիւնք ուստի օրէնսդրութեան կողմից: Ընթէ բացառիկ իրաւունքն անցնում է միայն գրաված առ-հրատարակչին, զրա հետեւանքն այն է լինում, որ նա չի սնամեաց արօնութեան իրաւունք է սպանում՝ հեղինակի մահից չեփոց. իսկ եթէ այդ իրաւունքն անցնում է մի հրատարակչական շրջանի կամ ընկերութեան, ինչպէս է Пособи-НИКЪ-ը, այն ժամանակ ձեռք է բերում չի սնամեաց արօնութեան իրաւունք՝ միայն հաշւելով հեղինակութեան հրատարակութեան օրից²):

Մեզ մտում է շեռ մի քանի խօսք էլ ասել հեղինակի օրինա-

¹ Շերշենեիչ. Հեղինակի իրաւունքը:

² 420 107. (Ման. 2) չաւելւածի 2 107. X հ. I մ.

³ Շերշենեիչ. Հեղինակի իրաւունքը, էջ 144

կան չափորդների շրջանի մասին. խօսքը հեղինակի ժառանգների մասին է: X հ. I մ. 1185-րդ յօդաձևը ընդունում է, որ հեղինակի իրաւունքը կարող է նրա ժառանգներին անցնել ուղորական երկու ճանապարհով՝ օրէնքով և կրակով. սակայն այս իրաւունքը, ասում է յօդաձևը, չի կարող 50 տարուց աւելի փակել հեղինակի մահից չեփոց: Այսպէս ուրեմն՝ բոլորովին նման այն անձերին, որոնք օրինական կերպով ժառանգում են որևէ գույք, հեղինակի ժառանգն էլ, իր հեղինակ-հօր մահից չեփոց ամբողջովին ձեռք է բերում նրա իրաւունքը հեղինակութեան վրայ, միայն կրճատած ժամանակամիջոցով, որի ընթացքում ժառանգը իր իրաւասութեան սահմանում հետևում է, ի հարկէ, ժառանգական իրաւունքի այս սկզբունքին թէ nemo plus juris, quam prior transferre non potest: (II, որ չի կարող իր ունեցած իրաւունքից աւելի բան թողնել իր ժառանգին):

Բայց շեռ մնում է այն հարցը, թէ մի քանի ժառանգներին չպիտի իրաւունքներ ունին իրենց օգտին թողած մի զբաղման վերաբերմամբ:

Այս հարցին ուղիղ պատասխան չկայ հեղինակութեան վերաբերելու ուստական օրէնքների մէջ, բայց նրա լուծումը կարող է հեշտանալ եթէ հեղինակութեան վրայ նայենք որպէս մի անբաժան գույքի վրայ¹: Այդպիսի հայեացքով շեղակարեւ լիս պարզ է որ իւրաքանչիւր ժառանգին բաժին կընկնի մի երկասիրութեան վերաբերմամբ հեղինակի իրաւունքի՝ այսպէս ասած իրէալական մասը (идеальная доля²) և այսպիսի իրաւունքի այս կամ այն կերպ գործադրութիւնը կարող է փոշի ունենալ միայն բոլոր մասնատերերի համաձայնութեամբ: Ինչ վերաբերում է հեղինակի մահից չեփոց լոյս փռած երկերին, X հ. I, 1185 յօդաձևից անուշաղակի կերպով կարելի է եզրակացնել, որ մի այդպիսի երկասիրութեան՝ ինչպէս և ամենայն գույքի իրաւունքը պարկանում է հեղինակի ժառանգին: Սակայն օրէնքը յիշել չի որոշում այն մասնաւոր շեղ-

¹ Зак. Граж. т. X ч. I ст. 393

² Այսինքն բաժանուում է ոչ իրը ինքը (≡գիրքը), այլ նորա շրջանական արդիւնքը:

քերի վերաբերմամբ, երբ մահից յետոյ լոյս տեսած երկասիրութեան հեղինակը անժառանգ է: Հաւանօրէն՝ այդպիսի շէպքերում կամ ամբողջ հասարակութիւնն է ժառանգ հանդիսանում և նրա իւրաքանչիւր անդամը սահմանափակած չէ գրեւորի հրատարակութիւնից օգտուելու համար, և կամ այդպիսի աշխատութիւնների վերաբերմամբ գործադրուած է անտէր (ВЫМОРОЧНОЕ) գոյքերի ժառանգութեան կարգը:

Պարզելով ոռուսաց քաղաքացիական օրէնսդրութեան տեսակէտը հեղինակի իրաւունքի տէրերի վերաբերմամբ մեզ համար անհրաժեշտ է կանգառնել նաև հեղինակի իրաւունքին ենթակայ այն առարկաների (ОБЪЕКТЪ) վրայ, որոնց գոյութեան հետ անխզելի կերպով կապած է և այդ իրաւունքի տէրերի (СУБЪЕКТЪ) գոյութիւնը:

Հեղինակի իրաւունքի առարկայ ընդունեալ է անւանել ամենայն երկասիրութիւն, որ արդիւնք է հեղինակի մտաւոր աշխատութեան և կարող է գրական շրջանառութեան նիւթ լինել:

Հեղինակի իրաւունքի հաստատութեան ոռուս հետազոտողները Տաբաշնիկով, Մերշնենելիչ, Սպասովիչ և ուրիշները հեղինակի իրաւունքի առարկայի անհրաժեշտ, բնորոշ նշանը համարում են այն արտաքին ինքնուրոյն ձևը, որով արտայայտուած է ոգեկան սրեղծագործութեան արդիւնքը, լինի այդ բանաւոր թէ գրաւոր: Այդ հիման վրայ, դադուած է Տաբաշնիկովը, լմի հեղինակութեան միայն բովանդակութեան յիշատակումը, առանց նրա արտաքին ձևի պահպանութեան, չէ կարող հեղինակի իրաւունքի խանգարում համարուել:

Պրոֆէսոր Մէրշնենելիչը ասում է, քանի որ դաշափարը չի արտայայտուել, նա չի կարող հեղինակի իրաւունքի առարկայ լինել, որովհետև արտաքին անհրաժեշտ ձևը չունի:

Սպասովիչը ևս գտնում է, որ հեղինակութեան արտաքին կողմը պէտք է նոյնքան ամլողջացրած ներկայանայ, որ վերադարձութեան համար ջարմար լինի:

Մի խօսքով աշխատասիրութիւնը, լինի այդ բանաւոր թէ գրաւոր, Պաբէշանոսցեւի ասածով, զգրական արժէք պէտք է ունենայ: Երկրասիրութիւնների հրատարակութիւնը հասարակութեան մէջ տարածելու, այսպէս ասած գրական շրջանառութեան համար:

անհրաժեշտ է որ այդ երկրատիրութիւնները հեղինակի իրաւունքի առարկայ ճանաչւին. այս հիման վրայ է, որ ամենայն տեսակ յայտարարութիւններ, ծրագիրներ, հրաւիրաթղթեր և այլն չեն համարուում հեղինակի իրաւունքի առարկայ, որովհետեւ շրանց նպատակը գրական չէ, այլ հնար եղածին շփոշափ տարածելը. այնպէս որ իրաւացի է դատուում պրոֆէսոր Շէրշէնելիչը որ առանց իրաւունք ստանալու զոցա հրատարակողը «կարող է միայն ծառայութիւն մատուցանել հեղինակներին, բայց ոչ երբէք վնասել նրանց շահերին»:

Բացի այս, ամենայն տեսակ կառավարական կարգադրութիւնները, դատական վճիռներ, օրէնքներ, հրամաններ և այլն, առանձին վերցրած, գրական շրջանառութեան նիւթ չեն կազմում և հետեւաբար հեղինակի իրաւունքի առարկայ չեն կարող լինել. բայց, որպէս Կ. Պ. Պոլեյտոնոսցեան է ասում, «երբ հրատարակուում են որոշ նպատակով կամ ժողովածուի ձևով, կարող են առևտրի, գրավաճառութեան նիւթ կազմել, ապա դառնում են հեղինակի իրաւունքի առարկայ»:

Խուսական օրէնսդրութիւնը առարկայի (=օբյեկտի) վերաբերմամբ ընդհանուր որոշում չունի, այլ բովանդակում է լոկ պատահական նիւթերի բնաւորութիւն կրող ցուցակ, հեղինակի իրաւունքի ենթակայ նիւթերի վերաբերմամբ, այն է գրքեր, շարադրութիւններ, թարգմանութիւններ, երգեր, առակներ, հէքիաթներ, մասնաւոր նամակներ և մասնաւոր նկարողութիւններ, որոնք չեն նշանակւած հրատարակութեան համար, ամսագիր, յօդւածներ, օրացոյցներ, հրատարակով արտասանւած կամ կարդացւած ճառեր կամ այլ շարադրութիւններ, բառարաններ և այլն և այլն (տես յաւելւած 420 յօդ. Նանօթ. 2):

Սակայն պէտք է կարծել, որ մի այդպիսի թւականութեան մէջ, ինչքան էլ նա կատարեալ լինի, հազիւ թէ կարողանայ պարփակել հեղինակի իրաւունքի բոլոր գոյութիւն ունեցող առարկաները, առաւել ևս այնպիսիները, որոնք կարող են ծնունդ առնել ժամանակի ընթացքում. և արդարացի է նկատում Տաբաշնիկովը, որ այդպիսի մասնաւոր թւումները, ընդհանուր սահմանման փոխարէն, գործնականի մէջ յաճախ հասցնում են շար նշանաւոր տարածայնութիւնների և նոյն իսկ պարծառ են դառնում,

որ այնպիսի առարկաներ, որոնք՝ իրենց բնաւորութեամբ և անփոփոխական չարկութիւններով՝ պէտք է միակերպ օրէնքի պաշտպանութեան ենթակայ լինէին, ինչպէս են օրէնքի մէջ չիշտարակածները, մնում են առանց օրինական պաշտպանութեան: Այսպէս թէ այնպէս, օրէնսդրութիւնն իր հովանաւորութեան փակ է աւնում գրական երկերի վերոյիշեալ առանձին փեսակները: Դիմենք նրանց: Ռուսական օրէնքն այնքան զիջողաբար է վերաբերում հաւաքածուի կերպարանք ունեցող աշխատութիւններին, մասնաւոր խրատամարտիներին, որ հազիւ թէ կարելի լինի այդպիսի հրատարակութիւններ կազմողին մերկացնել ուրիշի հեղինակութեան իրաւունքը սինակոս անելու մէջ: (420 յօդ. չաւելւած 14) Այս նկատմամբ օտար օրէնսդրութիւնների մեծամասնութիւնը պահանջում է, որ գոնէ մասնանիշ անւի վերցրած յօդւածների աղբիւրը, որպիսի բան մենք չենք փեսնում վերոյիշեալ յօդւածում: Բացի այս, Շերշենեւիչի կարծիքով, աչք փեսակ հաւաքածու աշխատութիւնների, կրճատումների, համառօտութիւնների վերաբերմամբ օրէնքը ոչ մի շեկավարող որոշում չէ փալիս, եթէ կրճատումը ներկայացնում է ուրիշի հեղինակութեան փոխադրութիւնը՝ սեպհական խօսքերով: Սրէնքը, չիրաւի, չէ չիշում այդպիսի համառօտութիւնների մասին, որոնք մի այլ գրքի բովանդակութեան կրճատումն են ներկայացնում. սակայն պահպանելով հեղինակի իսկական շահերը, իբրև օրինակ կարելի է բերել այսպէս կոչւած «Եպիստոլարիումները» (Դասաստութիւնների կրճատ Դասընթացները), այսպիսի հրատարակութիւն է ճոկլի «Բաղաքակրթութեան պատմութիւնը Անգլիայում» գրքի Նոտովիշի փոխադրութիւնը. հազիւ թէ օրէնքը կարողանայ բոլորովին ապահովել հեղինակի շահերը, պահանջելով որ հաւաքածուները վերցնելիս միաժամանակ պահպանւին երկու պայմանները. առաջին որ այդ մէջ բերւած կտորները բոլորը միասին գրքի երրորդ մասից աւելի չլինեն, և երկրորդ որ հեղինակի բնագիրը երկու անգամ աւելի մեծ լինի քան մի որևէ է գրքից վերցրած քաշւածները: Այս երկրորդ պայմանը, մեր կարծիքով, կարող է առաջ բերել զանազան մեկնութիւններ, նայելով թէ ինչ ենք հասկանում «բնագիր» խօսքով: Եթէ օրէնքը պահանջում է, որ հեղինակն երկու անգամ աւելի շարադրած լինի, քան որևէ գրքից վերց-

րած հարւածները, այն ժամանակ Դժւար թէ մի այդպիսի պահանջ հիմնաւոր ներկայանայ, ամեն մի քայլափոխում կարելի է հանդիպել լուրջ հեղինակութիւնների, որոնց մէջ մի որոշ հարցի մասին վկայութիւն է բերւած մի այլ գրքից, բաց և այնպէս հեղինակի կողմից այդ հարցի վերաբերմամբ երկու անգամ աւելի նիւթ աւելացրած չէ, որպէս պահանջում է օրէնդրութիւնը: Իսկ եթէ օրէնքը թոյլ է տալիս, որ ամբողջ հրատարակութիւնը երկու անգամ աւելի մեծ լինի, քան որևէ գրքից վերցրած քաղւածները, այն ժամանակ կարող են լինել Դէպքեր, երբ ամբողջ հրատարակութեան մեծագոյն մասը զանազան գրքերից վերցրած վկայութիւնների կամ հարւածների հիւսւածքը կ'ներկայացնէ և, կարծում ենք, որ վերցրած բոլոր քաղւածքների գումարը չամենայն Դէպս կարող է մի որ և է գրքից առած հարւածներից երկու անգամ աւելի լինել: Իսկ եթէ ենթադրենք, որ Հեղինակի բնագիրը խօսքը քաղւածների համար չէ ստւած, այլ ինկարի են ասնւած լով հեղինակի սեպհական արտայայտութիւնները, այդ Դէպքում վերևում իբրև օրինակ վերցրած քաղւածաբար կազմւած գիրքը ներկայանում է մի աւելի և նոյն իսկ մի քանի այլ հեղինակների հեղինակութեան իրաւունքի զեղծումն: Մեր կարծիքով, նպատակայարմար կը լինէր այսպէս մեկնել, որ օրէնքը ի հարկէ, թոյլատրում է շարադրութիւնների մէջ քաղւածքներ կարարել, բաց պահանջում է որ այդպիսի աշխարութիւնը մի գրքից վերցրած քաղւածքներից զատ պարունակէր երկու անգամ աւելի կողմնակի նիւթ, որպիսի Դէպքում օրէնքի համար միևնոյն է, թէ այդ նիւթը այլ քաղւածքներից է քաղկացած, թէ հեղինակի սեպհական արդրութիւններից:

Հեղինակութեան իրաւունքի տէրերի Դրութիւնը ուստական օրէնդրութեան տեսակէտից քննելիս չիշնք որ հեղինակների հետ հաւասար կերպով թարգմանիչներն ու հրատարակիչներն էլ հանդէս են գալիս իբրև անկախ տէրեր հեղինակութեան իրաւունքի և որ նրանց իրաւունքներն էլ պաշտպանւում են նրանց ամբողջ կեանքի ընթացքում և 50 տարի էլ մահից յետոյ: Այստեղ աւելորդ չի լինիլ չիշնք և այն, որ կառավարիչ սենատի վճռագիր որոշման համաձայն թարգմանութիւնների ազատութիւնը ձանաչւում է

նոյն իսկ առանց հեղինակի համաձայնութեան, բայց 420 յօդուածի յաւելուածի 16-րդ հարուածի հիման վրայ մի անգամ թարգմանուած գրքի նոր թարգմանութիւնը թարգմանչի իրաւունքների շէմ գործել կը համարուի, եթէ նոր թարգմանութեան երկու երրորդը կարգով բառ առ բառ վերցրած է նախկին թարգմանութիւնից, որոնք շեռ կազմում են մի ուրիշի բացառիկ սեպհականութիւնը: Այսուամենայնիւ թարգմանութիւնների ազատութեան սկզբունքը կարարելապէս չէ պահպանուում ուսսական օրէնսդրութեան մէջ, օրինակ նա չէ տարածուում այնպիսի հեղինակութիւնների վրայ, որոնց համար, օրէնքի ասելով, անհրաժեշտ են եղել առանձին զիրոնական հետազօտութիւններ. այսինքն զիրութեան աշխատութիւնների հեղինակները իրենց են վերապահում թարգմանութեան իրաւունքը, եթէ այդ մասին յայտնում են բնագրի հրատարակութեան ժամանակ և բնագիրը լոյս ընծայելու համար գրաքննական արեանից թոյլատրութեան փոմսակը ստանալու օրից երկու տարայ ընթացքում իրենց թարգմանութիւնն են ներկայացնում: Այս պայմանների պահպանութեան շէպքում միայն օրէնքն ապահովում է հեղինակի թարգմանութեան բացառիկ իրաւունքը: Որոշ չափով ուսսական օրէնսդրութեան ուշադրութեանը արժանացել են նաև զրական երկերի այլ ընաւորութեան արոր տեսակները, որոնք, սակայն բաւականաչափ ամփոփուած չեն օրէնքի մէջ: Օրէնսդրութիւնը այդպիսի աշխատութիւններից չիշում է ամանաւոր նամակները, որոնք հասարակութեան համար չեն նշանակուած, և ամանաւոր նկարողութիւններն ու այլ թղթերը, որոնք չեն նշանակուած արագրութեան համար. վերջիններիս, այսինքն նկարողութիւնների հրատարակութեան շէպքում օրէնքը միայն պահանջում է հեղինակի համաձայնութիւնը, իսկ եթէ նա մեռել է՝ նրա ժառանգների թոյլատրութիւնը: Ի հարկէ, այդ այդպէս է. բայց մանաւոր նամակների վերաբերմամբ օրէնքը ընդհանուր կերպով է խօսում, առանց նրանց բովանդակութեան արժէքը գնահատելու. բանն այն է, որ օրէնսդրութիւնը այդպիսի նամակների հրատարակութիւնը թոյլատրում է միայն նամակների հեղինակի և արացողի մէջ կայացած փոխադարձ համաձայնութեան հիման վերայ, իսկ նրանց մահից յետոյ՝ նրանց ժառանգների: Սակայն հաղիւ թէ հնարաւոր լինի բոլոր մանաւոր

բազմազան նամակների հրատարակութիւնը կապել նաև նրանց սպացողի անսպայման համաձայնութեան հետ անկախ այն բանից, թէ այդ նամակներն արդեօք արժէք ունին հասարակութեան համար կամ, գուցէ, հեղինակը իր պատիւը պաշտպանելու համար անհրաժեշտ է համարում նրանց հրատարակութիւնը: Ռուսական օրէնսդրութիւնը, ինչպիս երևում է, փոխադարձ համաձայնութիւն պահանջելով ի նկատի ունէր, մի կողմից, պաշտպանել արտաքուստ հեղինակութեան իրաւունքի շահերը. իսկ միւս կողմից՝ նամակների տիրոջ՝ ստացողի շահերը: Ուրիշ խօսքերով ասած, օրէնսդրութիւնը կամեցել է միացնել այս երկու շահերը...

Յամենայն դէպս հեղինակի նիւթական շահերը այսօրեղ կատարելապէս չեն ապահովուում. բայց եթէ մասնաւոր, գուցէ թանկագին նամակներից օգուտ ստանալու կարելիութիւնը կարող է իրագործւել միայն նամակատիրոջ համաձայնութեան դէպքում, ուրեմն և վերջինս իրաւունք ունի արդիւնքից մաս պահանջել, թէև ինքը ոչ մի անմիջական մասնակցութիւն չէ ունեցել նամակների արեղծագործութեան մէջ:

Այժմ անցնենք ամենից աւելի տարածւած գրական երկերին, գրաւոր և բանուոր աշխատութիւններին նեղ մտքով վերցրած (դասախօսութիւններ, ճառեր, քարոզներ): Այս աւարկաների վերաբերմամբ ռուսական օրէնսդրութեան մէջ գոյութիւն ունին որոշումներ, որոնք ոչ մի զանազանութիւն չեն շնուում նրանց մէջ: Օրէնքի առաջ հաւասարապէս խարդախութիւն կամ օրէնքի խօսքերով ասած ինքնագլուխ հրատարակութիւն, է համարուում, եթէ մէկը առանց հեղինակի համաձայնութեան տպագրէ նրա հրատարակաւ արտասանած կամ կարդացած ճառը կամ մի այլ աշխատութիւնը: Ուստի օրէնսդրութեան տեսակէտից վերցրած օրէնքի հակառակ վարմունք պէտք է նկատւի, օրինակ փաստաբանի և դատախազի ճառերի սղազիր հաշորդումը կամ սրանց տուանձին հրատարակութիւնը, եթէ նախապէս այդ մասին չիշեալ անձնաւորութիւնների հաւանութիւնը չէ առնւած: Համեմատաբար աւելի ընդարձակ քաղաքներ կատարող գրական երկերի շարքին

պատկանում են պարբերական հրատարակութիւնները, լրագիրները և ամսագիրները: Ուրիշ պարբերական հրատարակութիւններից արտատպումներ կատարելու համար լրագիրներին տրւած լայն ազատութիւնը բացառուում է լրագրական գործի բացառիկ բնաւորութեամբ: Երբ արգելում է մի երկասիրութեան արտատպումը, ի նկատի է առնում հեղինակի կամ հրատարակչի նիւթական շահերի պահպանումը, որը կարող է իրագործւել միայն այն դէպքում, երբ հեղինակին թոյլ է տրւում որոշ ժամանակով օգտւել իւր ծախս հանածը երկասիրութեան արդիւնքից, իսկ կողմնակի մարդիկ իրենց հետու են պահում նմանօրինակ գործողութիւնից: Սակայն միւսնոյնը չի կարելի ասել լրագրի վերաբերմամբ, որ ծառայում է օրւայ հարցերին: Ամէն քիչ շար աչքի ընկնող լրագիր շահագրգռած է միայն այն բանով, որ նրանից վերցրած տեղեկութիւնները կրեն նրա վաճառատան գրողները, որպէս զի հասարակութիւնը իմանայ, թէ ինչ աղբիւրից են նրանք առնւած: Ինչքան յաճախ կրկնւի լրագրի անունը, նոյնքան աւելի կը բարձրանայ նրա նշանակութիւնը, որովհետեւ աղբիւրը չիշտրակելով քաղաքներ կատարելը ամենալաւ միջոցն է աէկլամի համար, վաճառատան անունը կարածելու ամենալաւ եղանակն է:

Պարբերական հրատարակութիւնները վերաբերմամբ ուսական օրէնսդրութիւնը ասում է թէ խարդախող է համարւում մի ձեռքնալիտ, որը գրախօսութեան կամ այլ պատրւակով մշտապէս արտատպում է նաև ամենափոքրիկ յօդւածները, նոյն իսկ եթէ նոքա գրաւեն մի թերթից պակաս տեղ. բայց, շարունակում է օրէնքը, մի թերթից ոչ աւելի մեծ յօդւածի, որպէս նաև քաղաքական կամ գրականութեան, գիտութիւնների և գեղարեստների վերաբերեալ լուրերի պատահական արտատպութիւնը որ և է հրատարակութեան մէջ, աղբիւրների ցուցմունքով, արգելւում է: Զեղինակութեան իրաւունքին ենթակայ գրական երկերի շարքին պատկանող վերոյիշեալ ստարկաններից զատ, օրէնքը պահպանում է հեղինակութեան իրաւունքը և այլ այնպիսի նիւթերի վերաբերմամբ, ինչպէս են բառարանները, աշխարհագրութեան քարտեզները, պատմական ցուցակները, ո՛ր շեցօցները և այլն:

Անցնելով վերջին, այն է հեղինակութեան իրաւունքի արացման և ոչնչացման հարցին, կրկնութիւններից խոյս փախու համար մենք պէտք է կանգ առնենք սոյն հարցի միայն այն կարևոր կէտերի վերայ, որոնք իրենց այս կամ այն լուծումը գտնում են ուսաց քաղաքացիական օրէնսդրութեան մէջ: Հեղինակութեան իրաւունքը ձեռք բերելու հարցը բարդ խնդիր է համարուում այն մարտի, որ նրա մէջ զանազանում են հեղինակութեան իրաւունքը յանձին հեղինակի և հեղինակի ժառանգներին անցնելու և այդ իրաւունքի վերացման ընդհանրութիւնները: Ռուսական օրէնսդրութեան համաձայն, յանձին հեղինակի՝ նրա աշխատութեան հրատարակութեամբ առաջ է գալիս և նրա հեղինակութեան իրաւունքը: Միևնոյն ժամանակ հաւաքական սրբազագործութիւնների հրատարակութիւններին ևս նոյնքան իրաւունք է յարկադրուում, որքան և հեղինակներին: Ահաւասիկ երկու կարգի մարտիկ, որոնք օգտուում են հեղինակի այսպէս ասած սկզբնական իրաւունքից, այն ինչ նրա ածանցական իրաւունքի պէրերը կարող են լինել հեղինակի ժառանգները, նրա երկերի հրատարակողները և իրաւաբանական անձնաւորութիւնները: Սկզբնական իրաւունքի նշանակութիւնը կայանում է այն առանձնութիւնների մէջ, որոնք արւում են այդ իրաւունքն ունեցող հեղինակներին: Ի միջի այլոց սկզբնական թէ ածանցական իրաւունքի պէր լինելը առանձին նշանակութիւն ունի մահից յետոյ մնացած հեղինակութիւնների վերաբերմամբ: Սեղ յայտնի է, որ հեղինակութեան իրաւունքի արտօնութիւնը արւում է հեղինակի ամբողջ կեանքի ընթացքում և 50 փարի նրա մահից յետոյ:

Իսկ այդ ժամանակամիջոցը անցնելուց յետոյ հեղինակութիւնը շառնում է հասարակութեան սեփականութիւն: Եթէ ժառանգները կարողացան մինչև 50 փարին հրատարակել մահից յետոյ մնացած հեղինակութիւնը, այն ժամանակ նրանք ձեռք են բերում հեղինակութեան անւանական իրաւունքը, որը նրանց վերաբերմամբ ոչ ոք ունի մինչև 50 փարի՝ սկսած հրատարակութեան թուականից: Ենթադրենք թէ ժառանգները ժամանակամիջոցը անցկացրին և երկը շարձաւ ընդհանուր սեպհականութիւն. այս դէպքում հողմնակի անձնաւորութեան ձեռքով հեղինակի մահից յետոյ մնա-

ցած աշխարութեան արագբութիւնը առաջ է բերում հեղինակութեան սկզբնական իրաւունք յանձին հրատարակչի և այդ իրաւունքի շինամեայ ժամանակամիջոցը սկսում է ոչ թէ հրատարակութեան օրից, այլ հեղինակի մահւան օրից հաշուելով: Այդ շէպքում հրատարակչի իրաւունքի համար մեծ նշանակութիւն ունի նաև յանձնարարողի և հեղինակի փոխադարձ յարաբերութիւնները քննելիս: Ռուսական օրէնքի տեսակէտից, Սպասովիչի կարծիքով շինամեայարողը ոչ մի կերպով չէ կարող վայելել հեղինակութեան սկզբնական իրաւունքը, այլ կարող է սպանալ լոկ անւանական իրաւունք, որը նրան զիջանում է հեղինակը. թէև նա ինքը տւած լինի հեղինակին հեղինակութեան գաղափարը, նրա ծրագիրը և աշխարութեան վերաբերեալ բոլոր նիւթերը: Ապա պիտի նկատել, որ երբ մի երկասիրութիւն կամ ընդհանրապէս զիրք բաղկացած է զանազան յօդւածներից, որոնք միասին կազմում են մի հրատարակութիւն, այդ շէպքում այդպիսի երկի հրատարակչը և խմբագիրը ձեռք է բերում հեղինակութեան սկզբնական իրաւունքը ամբողջ հրատարակութեան վերաբերմամբ. նաև առանձին կերպով այդ իրաւունքը ստանում են յօդւածների հեղինակները, այսինքն իւրաքանչիւր հեղինակ սպանում է իւր հեղինակութեան սկզբնական իրաւունքը: Այստեղ, այսպէս ասած, երկու տեսակ իրաւունք կայ: Հեղինակութեան սկզբնական իրաւունքը (և իր ածանցականը միայն յանձին ժառանգների) մնացած անւանական իրաւունքների հետ համեմատած այն առաւելութիւնն ունի, որ հեղինակի կենդանութեան ժամանակ նրա երկերը չէ կարելի հրատարակով ծախու հանել առանց նրա համաձայնութեան, ոչ էլ մահից յետոյ՝ առանց նրա ժառանգների հաւանութեան: Այստեղ պէտք է նկատել, որ մէջ բերած յօդւածը նախատեսում է և այն շէպքերը երբ ձեռագիրները կամ երկրասիրութիւնները շեռ ծախու հանւած չեն, թէև կարող են արագբւած լինել: Սրանից կարելի է եզրակացնել, որ եթէ հեղինակի մօտ գրնէին նրա սեպհական երկերը, որոնց մի մասը արդէն ծախու է հանւած, այն ժամանակ մնացած օրինակներն ևս կարելի է հրատարակով վաճառել: Իրաւաբանական անձնաւորութիւնները, համալսարանները, ակադեմիաները վայելում են հեղինակութեան լոկ ածանցական իրաւունք այնպիսի

հրատարակութիւնները վերաբերմամբ, որոնք իրենց հեղինակները կողմից նրանց են յանձնուած եղել. այսինքն նրանք հեղինակութեան իրաւունքի տէր են համարուած 50 տարի հրատարակութեան օրից սկսած: Հեղինակութեան իրաւունքը գոյքի իրաւունքի պէս իր տիրոջ մահից չետոյ անցնում է նրա ժառանգներին համաձայն ընդհանուր քաղաքացիական կանոնների -- օրէնքով և կտակով: Ինչպէս արդէն մի քանի անգամ կրկնեցինք, օրէնքը ժառանգներին թոյլ է տալիս օգտուել հեղինակութեան իրաւունքից 50 տարուայ ընթացքում և մինչև այդ ժամանակամիջոցի լրանալը ժառանգներն ամեն կերպ տէր են համարուած այդ իրաւունքի, այլ հեղինակների նման համահաւասար չափով: Պարտաւորեցրի պահանջներին զոհացում տալը, հրատարակական աճրդով վաճառումը կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ զրական երկերի վերաբերմամբ հեղինակութեան իրաւունքը երրորդ անձերի ձեռքն է անցել: Այստեղ ուշադրութեան արժանի է այն կէտքը, որ քաղաքացիական Դատաւարութեան կանոնադրութիւնը, իրաւունքի չեղազայ ձեւակերպութեամբ, պահանջում է, որ հրատարակելու համար ձեռք բերած ձեռագիրը ծախսելիս՝ նոր գնողը նախապարտաւորւի կտարել այն բոլոր պայմանները, որ չանձն է առել ձեռագրի նախկին տէրը: Թէև հեղինակութեան իրաւունքին վերոյիշեալ չափով որոշումների մէջ ոչ մի չիշարտեկութիւն չկայ այն մասին, թէ հեղինակը կարող է որիշին զիջանել իր իրաւունքը, սակայն ռուսաց քաղաքացիական իրաւունքի ընդհանուր զաղափարի հիման վրայ կարելի է եզրակացնել ինչպէս ամենայն իրաւունքից նոյնպէս և հեղինակութեան իրաւունքից հրաժարումը կարող է թոյլատրուել բոլոր օրինական ճանապարհներով ինչպէս և հրատարակով չափարարելով իր հրաժարումը հեղինակութեան իրաւունքից յօգուտ հասարակութեան, ձրի կերպով ուրիշին յանձնելով իրրև պարզ և որոշ վարձատրութեան վոխարէն ուրիշին զիջանելով առևտուրի վոխասակութեան ձեով: Հեղինակութեան իրաւունքի մի անձից միւսին անցնելու հարցը ենթադրում է, ի հարկէ, այդ իրաւունքի ոչնչանալը առաջի անձի վերաբերմամբ: Հեղինակութեան իրաւունքի ոչնչացման կանոնաւոր կշանակը համարուում է օրէնքով որոշուած ժամանակամիջոցի լրանալը, բաց ղնչացումը տեղի է ունենում և

այն ժամանակ, երբ հեղինակը շաքարանի վճռով գրկուեմ է իր քաղաքցիական բոլոր իրաւունքներինց, մի վճիռ, որ փարածուեմ է մարդուս բոլոր իրաւական կողմերի վերայ: Աերջապէս ոուսական իրաւաբանական գրականութեան մէջ ցուցուեմ կայ և այն մասին, որ հեղինակութեան արտօնութիւնը վերանուեմ է և այն շէպքուեմ, երբ գրական սեպականութիւն կազմող հեղինակութիւնը շառնուեմ է հասարակական սեպականութիւն. իբրև սպացոյց այդ մտքի Ապաստփիշը մարտանիշ է անուեմ անգլիական այն օրէնքը, որի հիման վրայ կողմնակի անձեր կարող են հրապարակել հեղինակի մահից չետոյ մնացած գրքերը, եթէ նրա ժառանգները անհոգութեան պարծառով շէպի իրենց շահերը կամ չհամակրելով նրա գաղափարին իրենք չհրապարակեն այդ երկերը: Չմտնելով անգլիական օրէնքի քննութեան մէջ, միայն այսքանը կ'ասենք, որ ոուսական օրէնսդրութեան նկատմամբ հեղինակութեան իրաւունքի հասարակական շառնալու մասին խօսք չէ կարող լինել, քանի որ այդ հարցի վերաբերմամբ ոչ մի որոշուեմ չկայ ոուսական կաշտրութեան օրէնքների ժողովածուի մէջ: Գրական երկերի վերաբերմամբ հեղինակութեան իրաւունքի մասին մեր ներկայացրած աշխարութիւնը վերլուծութիւն է ներկայացնուեմ գործադրող քաղաքացիական օրէնսդրութեան, որի հիմքը կազմուեմ է, ինչպէս մենք արդէն առիթ ունեցանք չիշելու, 1828 թ. օրէնքը, որը մինչև 1857 թիւը աննշան փոփոխութիւնների միայն ենթարկեց: Այսպէս ուրեմն վերջին չորս տասնեակներին և աւելի ժամանակի ընթացքուեմ ոուսական հեղինակութեան իրաւունքի բովանդակութիւնը մնացել է և մնուեմ է անփոփոխ: Այսպիսի մի երկար ընթացքուեմ ոուսական հեղինակութեան իրաւունքի պարմութեան մէջ ոուսական արդարաշարութեան համար աւելի զգալի զանցառութիւն կըթւի եթէ մտաբերենք, որ լոկ վերջին կէս դարի ընթացքուեմ արեմտեան Սերոպալի մեծ ազդեցութեան տակ փոխեցան ուս հասարակութեան ճաշակը ու ոգեկան պահանջները, զարգացաւ գրքերի փոխանակութիւնը գրավաճառարներու, չաչորնեց գրական երկերի նոր տեսակներ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ երկերի աչալիսի դրութեան մէջ, նոր առաջ եկած շար հասարակական երևոյթները չէին կարող չմերկացնել ոուսական քաղաքացիական օրէ-

Նադրութեան մէջ նկարուող թերութիւններն ու կիսաօր մտքերը հեղինակութեան իրաւունքի հարցի վերաբերմամբ:

Մեր սոյն աշխատութիւնն արդէն պատրաստ էր, երբ լրագիրներում կարդացինք, որ Քաղաքացիական օրէնսդրութիւնը կազմելու համար կարգուած Խմբագրական մասնաժողովը Պետական խորհրդի քննութեանն է ենթարկել հեղինակութեան իրաւունքին վերաբերեալ կանոնների մի նոր ծրագիր, որի համաձայն պահպանուում է հեղինակի ժառանգների իրաւունքների պաշտպանութեան ներկայումս գոյութիւն ունեցող ցիմնամեայ ժամանակամիջոցը: Անփոփոխ է թողնուում և արտասահմանում օտարների ձեռքով հրատարակուած երկերը թարգմանելու ազատութեան վերաբերեալ կէտք: Ընդհակառակը՝ հայրենի հեղինակներին շնորհուում է իրենց աշխատասիրութիւնները թարգմանելու բացառիկ իրաւունքը, մի իրաւունք, որից նրանք այժմ զուրկ են: Սակայն այս իրաւունքը նրանց տրուում է մեծ սահմանափակումներով, այն է՝ ընդամենը տասը տարի ժամանակով և այն պայմանով, որ սեպհական թարգմանութիւնը լոյս տեսնէ աշխատասիրութեան հրատարակութիւնից չէտոյ երեք տարուայ ընթացքում: Նշանաւոր կատարելագործութիւն է ներկայանում խարդախութեանց նշանները որոշելու այժմեան մեքենայական եղանակի (երեսների և տողերի քանակութեան համագումարի) փոխարէս Դատավարութեան թողնուած մեծ ազատութիւնը՝ ինչպէս այդ նշանները պարզելու հարցում, նոյնպէս և միասին չափը որոշելու խնդրում: Ստար երկերի արտատպութիւնն արգելուում է միևնոյն հիմունքների վրայ, ինչ հիմունքների վրայ և հայրենի երկերի արտատպութիւնը. բացառութիւն է արւած միայն օտար երաժշտական երկերի վերաբերմամբ, որոնց արտատպութեան արգելումը վտանգաւոր է համարուած Ռուսաստանում երաժշտական գործի ապագայ զարգացման համար: